

ՆԱՐԵԿ
ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՈՅ

Բան ԴԳ.

Ա.— Աստուած յաւիտենական, բարերար եւ ամենակալ, ստեղծող լոյսին եւ յօրինող գիշերին. մահուան մէջ կեանք եւ խաւարին մէջ լոյս եւ Դուն. ակնկալողներուն յոյսը եւ շուարածներուն երկայնամտութիւնը. Քու ամենահնար իմաստութեամբդ առաւօտի կը փոխես մահուան ստուերները, ո՛վ աննուաղ ծագում եւ անմուտ արեգակ. վասնզի գիշերին խաւարը չի կրնար ծածկել Քու տէրութեանդ փառքը: Քեզի ծնրադրելով կ'երկրպագեն բոլոր արարածները, երկնատրները եւ երկրատրները եւ սանդարամետականները. Դուն կը լսես կապուածներու հեծութիւնը եւ կը նայիս խոնարհներուն աղօթքին, ու կընդունիս անոնց խնդրուածքը, Աստուածս եւ թագաւորս, կեանքս եւ ապաւէնս, յոյսս եւ վստահութիւնս, Յիսուս Քրիստոս, ամենուն Աստուածը. ո՛վ սուրբերուն հոգիին մէջ հանգչող Սուրբ, վիշտերու մխիթարութիւն եւ մեղատրներուն քաւարան, որ գիտես ամէն բան՝ անոնց ըլլալէն ալ առաջ. դրկէ Քու պահպանողական աջիդ զօրութիւնը, եւ փրկէ՛ զիս գիշերային երկիւղէն եւ չար դէւէն: Որպէսզի Քու սուկալի եւ սուրբ անունիդ յիշատակը միշտ համբուրելով հոգիիս շրթունքներովը եւ սրտիս փափաքովը, պահպանուած ապրիմ անոնց հետ, որոնք իրենց ամբողջ սիրտովը Քեզի կը կանչեն:

Բ.— Ու Քու խաչիդ նշանին դրոշմէն, զոր աստուածային արիւովդ ներկելով նորոգեցիր. ու զմեզ անոր որդեգրութեան շնորհովը մկրտեցիր եւ Քու պատկերիդ համեմատ նկարելով վերստին ստեղծեցիր. այո՛, խաչիդ, արիւնիդ մկրտութեան այս պարգեւներէն թող ամչնա՛յ սատանան, թող քակտուի՛ն անոր մեքենաները, թող վերցուի՛ն որոգայթները, պարտուի՛ն մարտնչողները, ոչնչանա՛ն սայրասուր զէնգերը, ցնդի՛ մեզը, փարատի՛ խաւարը, ցրուի՛ մառախուղը: Բազուկդ թող հովանանայ, թող աջդ վրան մնայ. վասնզի Դուն գթած եւ ողորմած ես, ու Քու անունովդ կոչուած են Քու բոլոր ծառաներդ: Փառք եւ իշխանութիւն Քեզի, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բառարան

Նուաղ - Անուժ, առկայծ, աղօտ:

Սանդարամետ - Խոր դժոխք, դժոխքի իշխանութիւն:

Դրոշմ - Կնիք, հետք, կնունք

Որոգայթ - Ծուղակ, թակարդ

Սայրասուր - Սրածայր, խիստ սրուած